ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 12-Ա 12 հունվարի 2026 թ.

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԻՆԱՐԻ ՏԱՐՐԱԿԱՆԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 37.1-ին, 37"2-րդ և 39-րդ կետերի պահանջներն ու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 514 արձանագրությունը (2025 թվականի հունվարի 8-ի Ն/08-2026), ինչպես նաև Քրիստինե Սահակյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Քրիստինե Սահակյանին 2026 թվականի հունվարի 13-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինարի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 1 տարի փորձաշրջանով (13.01.2026-13.01.2031թթ.):

2. Փորձաշրջանի ղեկավար նշանակել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Միհրանուշ Սահակյանին:

3. Փորձաշրջանի ղեկավար Միհրանուշ Սահակյանին՝ առաջնորդվել կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով:

12.01.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ